ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 165 - Ա
19 օգոստոսի 2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6 - Ի N 8 – Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի մարտի 6-ի <<**Քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների պետեր** նշանակելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի մայիսի 17-ի N 38 – Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 8–Ա կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝ կարգադրության

1) 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

<<1. Քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների պետեր նշանակել՝

Հովհաննիսյան Դերենիկ – ինժեներական ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Հովհաննիսյան Վանիկ - բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Մուշեղյան Յուրա – նյութատեխնիկական մատակարարման, սննդի և առևտրի ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

Ադամյան Արսեն - հասարակական կարգի պահպանության ծառայության պետ, ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության պետ

Մանուկյան Պետրոս - բժշկական ծառայության պետ, մարզպետի խորհրդական

Խաչատրյան Գևորգ - տրանսպորտային ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ

Բիձյան Հակոբջան - կոմունալ տեխնիկական և բնակչության հատուկ սպասարկումների ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների բաժնի վարիչ

Հայրապետյան Արազ - կապի և ազդարարման ծառայության պետ, <<Արմենթել>> ՓԲԸ արևելյան տարածքային կենտրոնի Գավառ-Սևան ուղղության ղեկավար

Գամբուրյան Սարգիս - էներգետիկայի և լուսաքողարկման ծառայության պետ, <<Հայ ԷՑ>> փակ բաժնետիրական ընկերության <<Գեղամա>> մասնաճյուղի տնօրեն**>>.**

2) 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

<<2. Մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ Տիգրան Հակոբյանին՝ համագործակցելով մարզպետարանի աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ կազմակերպել մարզպետարանի քաղաքացիական պաշտպանության, քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման և հետագա ճշգրտման աշխատանքների իրականացումը:>>.

3) 3-րդ կետից հետո լրացնել նոր՝ 3.1. կետը հետևյալ բովանդակությամբ՝

<<3.1. Մարզի քաղաքացիական պաշտպանության պետերի աշխատանքների համակարգումը վերապահել մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյանին:>>:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ